ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌԻ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 5-24-76

N 218
15 դեկտեմբեր 2018թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 2018թվականի 201-207որոշումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

10 12 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ No 201.

06-031-0069-0018 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով քաղաքացի Վարդան Սեյրանի Ալեքսանյանի դիմումը, «Է. Ապրեսյան» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 N 2387 Ն որոշմամբ, հիմք ընդունելով 30.11.2018թ. ժառանգության իրավունքի N 4689 վկայագիրը՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0069-0018 ծածկագրի տակ գտնվող 0.07137հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1992թ. կառուցված 74.12քմ մակերեսով բնակելի տան, 1992թ. կառուցված 35.6քմ մակերեսով բնակելի տան, 1992թ. կառուցված 50.5քմ մակերեսով ծածկարանի, 1992թ. կառուցված 20.0քմ մակերեսով բաց պատշգամբի նկատմամբ Վարդան Սեյրանի Ալեքսանյանի (ծնվ. 16.10.1979թ.) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.07137հա հատկացված հողամասն անհատույց, սեփականության իրավունքով վերահատկացնել Վարդան Սեյրանի Ալեքսանյանին:
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝
գ. Գուգարք 10-րդ փողոց տուն 51-1
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

11 12 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ No 202

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0010-0001-001-27 ԾԱԾԿԱԳՐԻ, ԱՆՆԱ ԲԱԲԿԵՆԻ ՄԱՂԱՔՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ (ՀԱՍԱՁԱՅՆ 19.05.2017Թ. ՏՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ N 19052017-06-0009 ՎԿԱՅԱԿԱՆԻ) ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշումով՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0010-0001-001-27 ծածկագրի, Աննա Բաբկենի Մաղաքյանի ընտանիքին պատկանող բնակարանի համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝
գ. Գուգարք Էներգետիկների 5-րդ փողոց շենք 9 բնակարան 27

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

11 12. 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ No 203

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0794-0003 ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ (ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՏԱԿԱԳԾԻ) 0.002014հա ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ, ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 05.12.2018թ. թիվ 101/111.3/8067-18 գրությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 53 հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387 Ն որոշումով՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0794-0003 ծածկագրից առանձնացված 0.002014հա մակերեսով բնակավայրերի ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողատարածքը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը:

Միջնորդել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարությանը կատարելու Գուգարք համայնքի սեփականության իրավունքի գրանցում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ:

3. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝
գ. Գուգարք 1 փողոց 14-43

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

11 12 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ No 204

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ (ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՏԱԿԱԳԾԻ) 0.0032հա ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ, ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 05.12.2018թ. թիվ 101/111.3/8066-18 գրությունը, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 53 հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387 Ն որոշումով, «Իրավական ակտերի մասին» թիվ 72 որոշումով՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061- ծածկագրից առանձնացված 0.0032հա մակերեսով բնակավայրերի այլ գործառնական նշանակության հողատարածքը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը:

Միջնորդել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարությանը կատարելու Գուգարք համայնքի սեփականության իրավունքի գրանցում սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ:

3. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

գ. Գուգարք 1 փողոց 1/41

4. Ուժը կորցրած ճանաչել Գուգարքի համայնքապետի 07.09.2018թ. N 148 որոշումը:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

11 12 2018թ.

ՈՐՈՇՈՒՄ No 205

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով շահագրգիռ ծառայությունների եզրակացությունը, ավտոտնակի տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, տեղադրման հատակագիծը, «Մել և Միլ գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինության հատակագիծը, Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՏԻՄ օրենքի 37 և 38 հոդվածներով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731 Ն և 912 Ն որոշումներով հաստատված կարգով, ՀՀ կառավարության 29.12.2005 N 2387 Ն որոշման 29-րդ կետի ա) ենթակետով՝

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Օրինականացնել Գուգարքի Էներգետիկների 5-րդ փողոցի 6/34 փոստային հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված պայմաններին համապատասխանող, կառուցված 23.12քմ մակերեսով ավտոտնակի, ինչպես նաև զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ բնակավայրերի խառը կառուցապատման 23.12քմ մակերեսով հողամասը և դրանց նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը:
2. Ինքնակամ կառուցված կառույցը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝
գ. Գուգարք Էներգետիկների 5-րդ փողոց 6/34
5. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում ապահովել գրավոր առաջարկություն սույն որոշման 1-ին կետում նշված կառույցն իրականացրած անձին՝ կառույցը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով գնելու վերաբերյալ:
6. 5-օրյա ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանում՝ սույն որոշման առաջին կետում նշված շինության և ծանրաբեռնված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 206
02.11.2018

ՍՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝

Գուգարքի բնակիչ Մելանյա Հարությունյանին տալ դրամական օգնություն 20000դրամ:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու Մարզի
Գուգարք համայնք
Հեռ. 5-24-76

14.12.2018

ՈՐՈՇՈՒՄ N 207

06-031-0069-0018 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Հիմք ընդունելով քաղաքացի Վարդան Սեյրանի Ալեքսանյանի դիմումը, <<Է. Ապրևյան>> ՍՊԸ կողմից կազմված հատակագիծը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387Ն որոշմամբ, հիմք ընդունելով 30.11.2018թ. ըստ օրենքի ժառանգության իրավունքի N 4689 վկայագիրը, քաղվածք հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշումից, <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝

Համայնքապետը որոշեց.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0069-0018 ծածկագրի տակ գտնվող 0,07137հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1992թ. կառուցված 74.12քմ մակերեսով բնակելի տան, 1992թ. կառուցված 35.6քմ մակերեսով բնակելի տան, 1992թ. կառուցված 50.5քմ ծածկարանի, 1992թ. կառուցված 20.0քմ մակերեսով բաց պատշգամբի նկատմամբ, Վարդան Սեյրանի Ալեքսանյանի (ծնվ. 16.10.1979թ.) սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված 0.07137հա հատկացված հողամասն անհատույց, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով վերահատկացնել Վարդան Սեյրանի Ալեքսանյանին (ծնվ. 1979թ.) Օֆելյա Բաղիշի Աֆրիկյանին (ծնվ. 1958թ.) և Մանուշ Սեյրանի Ալեքսանյանին (ծնվ. 1983թ.)
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:
4. Հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
5. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝ գ. Գուգարք 10-րդ փողոց, տուն 51-1:
6. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:
7. Ուժը կորցրած ճանաչել համայնքապետի 10.12.2018թ. թիվ 201 որոշումը:

Համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ